ցարդ այնպէս կը կարծէր, ամէն վերջ թող փարատէ իւր այդ թուիքը և լաւ գիտնայ թէ՝ իւր գրածները իբր «ըմբոստ» ծառայեցին, և բաւական մարդոց ծիծաղը շարժեցին․ ճիգվիթ թերթին ևս ինչ ասուրեանի թերթ լինելը միանգամ ևս հաստատեցաւ։

Տէր,

Հաճեցէք ինձ տեղի տալ այսօր, մէճմուաի մէջ, որով պատասխանեմ ճիգվիթ թերթին հայհոյիչ զրպարտչին, որով մնամ . . . .

Մ․ Վ․ Հայկ

---

(Շումնու մուխպիրիմիզտէն)

## ՊՈՒԼԿԱՐԻԱ

—

### ՌՈՒՍՃՈՒԳԻ ՀՐԷԻՑ ԴՊՐՈՑՆԵՐԸ

30 յուլիս 1885 Շումլա

Մեր մասնաւոր տեղեկութեանց նայելով Ռուսճուգի Հրէաները երկու կուսակցութեան բաժնուածեն․ առանցմէ առաջին մասն Ալեանսի հիմնարկած վարժարանի յարատեւութեան կը փափաքի, իսկ երկրորդ մասն բոլորովին հակառակ կացութեան մը մէջ կը գտնուի, այսինքն չուզեր, որ Ալեանսի հովանաւորութեան ներքև գտնուի Ռուսճուգի վարժարանը․ թէ և Ալեանս ինք ծախսած է շէնքի շինութեան համար բոլոր դրամները․ այս կերպիւ կողմնակի կը պնդեն իրենց նպատակաց վրայ․ որով Ռուսճուգի Գաղղ․ հիւպատոս խնդրոյն միջամտելով Սօֆիայի Նախարարութեան կը տեղեկագրէ, որ սոյն խնդիրը ի նկատի առնելով Ռուսճուգի կառավարչին հետեւեալ հրամանը կը ղրկէ ի գործադրութիւն, որ մենք Ռուսէ անուն Պուլկարական թերթէն կը քաղենք թարգմանաբար Նախարարական ժողովոյ որոշումը․

«Առ Պ․– կառավարիչ Ռուսճուգի.

«Ժողովս «Ալեանս» ... քննելով, որոյ անդամ կը գտնուէր նաև Ներքին գործոց Նախարարութեան տեսուչ Պ. Մաթիէֆ, Հրէից դպրոցի շէնքը, Քրէմիէօիւ ժառանգորդաց ներկայացուցած թղթերուն մէջ տեսնուած չըրջանի և սահմանի համաձայն գտնելով որոշեց․

«Հրէից դպրոցը անյապաղ Պ. Քրէմիէօիւ ժառանգորդաց ներկայացուցիչ Պ․ Բարիէնթէի յանձնուի, և եթէ տեղացի Հրէայք նոյն թղթոց ապօրինաւորութեան վերայ վիճաբանեն, կարող են ի դատ դիմել իրենց իրաւունքը ապացուցանելու․

«Այսկայ Ձեզ իմացնելով կաղաչեմ Պ. կառավարիչ, ժողովոյս սոյն որոշումը անյապաղ գործադրելու տնօրինութիւնն ընէք և գործադրութեան հետեւանքը մեզ հաղորդէք։»

Ի․ Ջանօֆ․ Բ․ Ջէրնէֆ և այլն

Ռուսճուգի կառավարիչը սոյն որոշումը անմիջապէս տեղւոյն Գաղղ․ հիւպատոսի կիմացնէ որով 7–8 ոստիկաններով ուղղակի Հրէից վարժարանը կերթան ուր գտնուող մի Հրեայ խումբ որչափ ալ դէմ կը դնէ, վերջապէս կստիպուի երկսեռ աշակերտք ցրուիլ․ որոնք լալով գոռալով կըսկըսին մեկնիլ․ այս պահուն Գաղղ․ հիւպատոսի Ա․ թարգման Սարգիս էֆէնտի Գասպարեան աշակերտները կեցնելով քաջալերական բանախօսութիւն մը կընէ երկսեռ աշակերտաց, որոյ վերայ 250ի մօտ գտնուած դըպրոցական մանուկները ուրախութեամբ կը մեկնին իրենց տուները։

Այս որոշման գործադրութեան վերայ Հրէից խաւարեալ մասը մեծաւ յամառութեամբ կը փափաքի քանակծել շլուսաւորեալ մասը, բայց Գաղղ․ հիւպատոսի աղաչանաց վերայ կառավարութեան կողմէ 15–20 ոստիկան կը ղրկուին Հրէից թաղը հըսկելու համար․ խաւարեալ մասը կատղած և աւելի յուսահատ վիճակի մէջ իյնալով, հետեւեալ հեռագիրը կը ղարնէ ուղղակի ի Սօֆիա․

«Առ Նախարարութեան Նախագահ Սօֆիայի․

«Տեղւոյս ոստիկանութեան դուռը այսօր ժամը 4ին ցերեկէն զկնի ընկերացեալ Բարիէնթէ անուն Գաղղիացի Հրէաի հետ անգթաբար արտաքսեց 250ի չափ երկսեռ աշակերտք այն դպրոցէն ուր կուսանէին Հրէից երկսեռ զաւակունք․

«Տեղւոյս օրինաց և օտարականաց նկատմամբ հաստատուած ... համեմատ կոյուածոյ վրայօք ոչինչ գործադրութիւն չկրնար տեղի ունենալ առանց դատաստանական վճռի մը, ոստիկանութեան այսպիսի ապօրինի գործադրած ձեռնարկութեանը դէմ մենք աղաղակաւ և բարձր ձայնիւ կը բողոքենք և ապագայի մէջ գալիք ո և է վնասուց պատասխանատու կը համարինք․

«կաղաչենք հեռագրաւ տնօրինէք, որ երկսեռ աշակերտք կրկին շարունակեն իրենց դպրոցը և շէնքը Գաղ․ Հրէայ Քրիմէրէօիւ ժառանգորդաց ներկայացուցիչ անուանեալ Բարիէնթէն, եթէ ինքը տակաւին սոյն կալուածոց տէր ըլլալը պնդէ, թող դիմէ դատարանի․ սահմանադրական կառավարութեան մէջ կապրինք․․»

Բաբունի

ՍԱԼԱՄՈՆ ԼԷՕՆ

Հոգաբարձու ... դպրոցի

Սոյն խնդիրը տակաւին վերջացած չէ․ Հրէայք իրարու խիստ գէշ աչօք կը նային․ իսկ դպրոցը կնքուած է Գաղղիա․ հիւպատոսի կողմանէ (1)․ Ցաւ է սա յիշել Հրէից այն մասին ըրած ապերախտութիւնն, որ ալեանսէ նման հարուստ և միանգամայն Հրէից վարժարանաց յառաջդիմութեան համար ամեն ինչ զոհող ... մը դէմ կը գործեն․ ո՞ւր էր, որ մենք Պուլկարահայքս ալ Ալեանսներ ունենայինք և ... քսակին չը մօտենայինք, որ յայնժամ չը պիտի ունենայինք ... կուսակցութիւններ․․․

ԿՈՌՆԱԿ

(1)․ Ալեանսի կողմանէ Հրէից Ռուսճուգի խախամին գրուած եւ խնդրուածը՝ դպրոցական բրոկրամ մը պատրաստելէ, ուսկից կը հասկցուի, որ կրկին իրենց պիտի յանձնէ դպրոցը․

---

(Շէհիր էմանէթինտէն)

Ցագը փաշատա Տիզտարիեէ սօգաղընտա ալթմըշընճը ատատա օն պէշ զիրա աչարի վէ օն ալթը բարմագ. եուզլինաէ վէ իքի պօեունա աէքսէն եէտի զիրա աչարի վէ եւկիրմի սէքիզ բարմագ թէրպիինտէ էմանէթ մալը արսանըն պէհէր զիրաը օն ալթը զրուշտա թալիպի իւհտէսինտէ օլուպ, իշպու աղօսթօսուն օն պէշինճի բէնճշէնպիհ կիւնիւ գ.աբարը գաթիսի վիրիլէճէկինտէն, տաhա զիեատէէէ թալիպ օլանլարըն թէէմինաթ աքճէլէրիյլէ պէրապէր եէվմի մէզքիւրէ գատար Շէհիր էմանէթի մէճլիսինէ կէլմէլէրի իլան օլունուր․

Ֆիյ 301 սէնէ 31 թէմուզ

—

(Օրման վէ մատէն նէզարէթինտէն)

Լազիսթան սանճաղընտա թապի Օրխավի նահիյէսի միրի օրմանլարընտան գաթթ իտիլմէք վէ պէտէլի հինի իհալէտէ լիրայի օսմանի եուզ զրուշ հիսապըյլա բէշինէն իթա օլունմագ իւզրէ իշէր եուզ գանթարտան ճէման ալթը եուզ գանթարը ճէտիտ խաշմիրին պէհէր գանթարը պէշէր զրուշտա մահէլլի թալիպի իւզերինտէ օլտուղունտան, զամմըյլա թալիպ օլանլարըն թարիխի իլանտան իթիպարէն եիկիրմի պէշ կիւնէ գատար տէբօզիթօլարըյլա պէրապէր Տէրսաատէթտէ օրման վէ մատէն մէճլիսինէ վէ մահէլլինտէ թրապիզօն օրման միւֆէթթիշլիկինէ միւրաճաաթ էյլէմէլէրի իլան օլունուր․

Ֆիյ 301 սէնէ թէմուզ 30

---


ԻՏԱՐԷԽԱՆԷՅԻ

ՄԷՃՄՈՒԱՅԸ ԱԽՊԱՐ

ՊԷՅՕՂԼՈՒ ՇԻՇԼԻ ՍՕԳԱՂԸ Nº 5

Իշպու իտարէխանէտէ, էլսինէյի միւխթէլիֆէ իլէ, եանի Էրմէնիճէ, Ֆրանսըզճա, Թիւրքճէ վէ Ռումճա ղազէթա, քիթապ, ռիսալէ, ճէնազէ պիլիյէթլէրի, քարթը վիզիթ, հէր նէվի իլանաթ քեաղըտլարը վէ սայիրէ դայէթ թէմիզ վէ միւշթէրիլէրի խօշնուտ խոտճէք սուրէթտէ միւթէտիլ վէ էհսալինէ նիսպէթլէ էհվէն ֆիյաթտա թապ օլունմագտա օլտուղու մալիւմիւ ամմէպուլյուրմագ իւզրէ, խասսէթէն իլան օլունուր․

